




2. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ՊՈԼԻՍ ԵՎ ԻՐ ԴԵՐԸ*

4. ՀԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ ԲՅՈՒՋԱՆԴԻՈՆԻ ՄԵՋ

Եվ ահա կհասնինք բրիտանյա եկեղեցիներու պատմության բացառիկ մեկ պահուն: Այդ պահը նախօրյակն է Փլորենտիո պատմական ժողովին, զոր գումարեց Եվգենիոս Դ պապը, Կաթոլիկ Եկեղեցւոյ համար նույնքան բացառիկ պահու մը: Կաթոլիկ Եկեղեցւոյ պատմության ծանոթ եղողները գիտեն, թե Պապական Աթոռին շուրջ տեղի ունեցած վեճերն և զայնակողութուններն հետո է, որ Եվգենիոս պապը նախաձեռնած էր Փլորենտիո ժողովը, որուն շնորհիւ կհուսար իր գիրքը պահանջել նախ և պատմության մեջ ևս հռչակվիլ Օրթոդոքս Եկեղեցին հաջողելով բերել պապերու գերիշխանության տուկ:

Պոլիսը հրատապ օրեր կանցներ ինքն ալ: Թրքական խուժումի վտանգին առջև, որ Բյուզանդիոնի դռան հասած էր արդեն՝ կայսրն ու պատրիարքը փրկության միակ լաստը կնկատեին պապը, որուն շնորհիւ կհուսային Արևմուտքի օգնությունը ևս ապահովել: Անոնց ընդառաջումը պապին հրավերին միաբանական ժողովի մը երթալ մասնակցելու՝ առավելապես այս մտահոգութենեն կրխեր, թեև հույն կղերին ստվար մեկ մասը և ժողովրդական լայն դանգվածները դեմ ըլլային այս հանձնառության: Տագնապը, որ Պոլսո մեջ ստեղծված էր, ժողովրդական խավերու այս դժգոհութենեն կրխեր և կուռճանար օրավուր, մինչ մահիկը կմոտենար Պոլսո դռներուն:

Ու ճիշտ այդ պահուն Պոլսո մեջ կհիշատակվին երկու հայ եպիսկոպոսներ՝ Ծսայի և Հովհաննես, որոնց անունը ևս կխառնվին ուրիշ օրերու տագնապալի անցուղարձերուն: Այնպես որ անոնք ոչ միայն երկու նոր անուն կավելցնեն Պոլսո գրավումն առաջ բյուզանդական մայրաքաղաքը նստող հայ եպիսկոպոսներու շարքին մեջ, այլ պատմության կանցնին Փլորենտիո ժողովին հայոց մասնակցության հետ կապված դեպքերուն մեջ իրենց ունեցած դերով: Արդարև, անոնց միջոցավ էր, որ պապը փորձեց Փլորենտիա հրավիրել հայոց կաթողիկոսը, որ Կոստանդին Զ Վահկացին էր այդ պահուն:

Արձանագրելով Հայ Եկեղեցւոյ ուղղված այդ հրավերը, հայ կաթողիկ պատմիչը կըսե. «Նույնիսկ Բասիլեայի սյունհողոսին հարքը՝ 1433-ին՝ ոչ միայն հունաց կայսրն և Կոստանդնուպոլսի պատրիարքն ի ժողով հրավիրած էին, այլ հայոց կաթողիկոսն ալ, որպեսզի արևելյան եկեղեցին ամբողջ իրենց կողմն ունենան. հրավիրանաց թուղթն ուղղակի Հովհաննես և Ծսայի արքեպիսկոպոսներուն ղրկեցին ի Կոստանդնուպոլիս, ուր ասոնք թեև Հայոց Եկեղեցւոյն երեսփոխաններն և ազգայնոց առաջնորդը կընակին, որպեսզի միջնորդ ըլլան կաթողիկոսն ալ հորդորեն, և կա՛մ անձամբ ժողովի երթալ, կա՛մ իր երեսփոխանները խրկել: Հրավիրանաց թղթին օրինակը կորսված է, բայց Հովհաննես և Ծսայի արքեպիսկոպոսներուն պատասխանը պահված է»⁶⁰:

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1962 թվականի № 8-ից, ԺԲ-ից և 1963 թվականի № Ա-ից:

⁶⁰ Հ. Աղեխանդը Պալեյան, «Պատմության կաթողիկե վարդապետության ի հայտ», էջ 80:

Արդարև, Հովհաննես և Եսայի արքեպիսկոպոսները 1433 սեպտեմբեր 30-ին գրած իրենց պատասխանին մեջ, զոր Պալմյան կհրատարակե Մանսին⁶¹ առնելով, կտեղնակացեն, թե կաթողիկոսին հաղորդած են ստացված հուպերը, ավելցնելով միևնույն ատեն, թե եկարի դժուարին է մեզ գալ ժողովի ի միասին, բանգի գրեալ թէ ողջուն իսկ ազգ մեր ցրուեալ է ի սփիւռս բարբարոսիկ աղագց, թաթարաց, տաճկաց և անհասարակ և շարագուն այն է, զի անկեալ կայ ընդ լծով ծառայութեան և հարկատու և այլն⁶²:

1433 նոյեմբեր 1-ին, միշտ Պոլսեն գրված նամակի մը մեջ⁶³, զոր Եսայի միայն ինք կատարագրե, կհաղորդէի Եվգենիոս պապին, թե իր հրավերը, լատիններին բնագրեն հայերենի վերածվելով, հղված է հայոց կաթողիկոսին, ուրկե ստացվելիք պատասխանը պիտի իսկույն հաղորդէի իրեն:

Հաջորդ նամակի մը մեջ, զոր 1434 նոյեմբեր 1-ին Պոլսեն Եվգենիոս պապին ղրկած է Եսայի, այս վերջինը ինքզինք կանվանե «Եսայի Երուսաղեմի»: Գալիմբյարյան կրսե, թե Եսայի եպիսկոպոսը այդ պահուն «Երուսաղեմի Պատրիարք» թշույն ալ կվարեր Մարտիրոս եպիսկոպոսի ձեռնը⁶⁴, մինչ ուրիշ աղբյուրն⁶⁵ գիտենք, թե Եսայի նույն միջոցին Երուսաղեմի Մարտիրոս պատրիարքին աթոռակիցն էր, ինչպես կընդունի Օրմանյան ալ⁶⁶:

Արդարև, Եսային ծանոթ է իրեն աթոռակիցը Երուսաղեմի հայոց պատրիարքին: Երուսաղեմի պատրիարք Մարտիրոս իր կենդանության իսկ իրեն գործակից-օգնական նշանակած էր զայն, նույնիսկ պատրիարք տիտղոսը տալով անոր և 1432-ին կամ 1433-ին իբր առաջնորդ ղրկած էր Պոլիս, ուր ան պիտի մնար մինչև 1438, տարի մը հետո Մարտիրոսի մահվամբ իբր պատրիարք գալ նստելու համար Երուսաղեմ:

Եսայի Մարտիրոսի աջակցած էր Գողգոթայի վերստացման գործին մեջ, ու կարծողներ կան, որ ան Մարտիրոսի հետ միասին եկած է Պոլիս՝ Կաֆայի հարուստ հայ գաղութեն դրամական սկիզբալուծվամբ և բնա-

կած է Բերա-Ղալաթիո ջենովական բաժնին մեջ, որ Կաֆայի ենթակա էր և սերտ կապեր ուներ անոր հետ⁶⁷:

Հայ կաթողիկ պատմիչը Պոլսո երկու հայ եպիսկոպոսներուն հանգամանքը ուղեով ճշտել, կրսե, թե անոնցմե մնացած նամակներուն մեջ «մտադրության արժանի է այն՝ որ Հովհաննես բոլոր բյուզանդական երկիրներու եպիսկոպոս է կաթողիկոսի կողմանե, իսկ Եսայի հատկապես Պոլսո եպիսկոպոս է, և այն՝ ո՛չ թե Ղալաթիո կողման, որ այն ատեն Բյուզանդիային անկախ ջենովական պետություն էր, այլ բուն Սաամպոլի, վասնզի այս եպիսկոպոսներ Բյուզանդիո հոռմեական կայսրն իրենց տեղը կնկատեն: Դարձյալ ասոնք երկուքն ալ կաթողիկե չէին... թեև ջերմ կուսակից միություն»⁶⁸:

Գալիմբյարյան կենթադրե, որ Եսայի հավանաբար դեր ունեցած է Ղալաթիո եկեղեցւո վերաշինության մեջ ևս 1436-ին. այս ենթադրությունը ընելու կմղվի այն փաստեն, որ Ս. Գրիգոր Լուսավորչի ավագ դռան վրա՝ 1733-ին գրված արձանագրության մը մեջ կհիշվի «պատրիարքն Երուսաղեմի Տէր Եսայիս»: «Ասպա թե ոչ,— կրսե,— ի՞նչ հարկավոր էր Երուսաղեմի պատրիարքը հիշել»⁶⁹:

Եսայիի Երուսաղեմ մեկնելն հետո ալ Հովհաննես եպիսկոպոս դեռ Պոլիս է 1438-ին: Հոն է որ կաֆայի հայերը իրեն կղրկեն 1438 թվակիր իրենց նամակը Սիսի Կոստանդին կաթողիկոսին ուղղված:

Իսկ Կոստանդին կաթողիկոս 1438 հուլիս 25-ին Թեոդոսիո հայոց ուղղած իր գրության մեջ կգրե, թե «եկին առ մեզ Յովհաննէս եպիսկոպոս և մատուցց զթնոյթ ի Թէոդոսիայ»⁷⁰:

Հենրիկոս արքեպիսկոպոս Չեքքինի, Փլորենտյան ժողովի պատմագիրը, վատիկանյան գրչագրերին քաղելով կգրե, թե 1438-ին Սլոնհոդոսի նիստերուն մասնակցեցան երկու հայ արքեպիսկոպոսներ⁷¹: Պալմյան կենթադրե, թե անոնք Պոլիս գտնվող Եսայի և Հովհաննես արքեպիսկոպոսներն էին⁷², բայց այդ մասին լուր չունինք ուրիշ աղբյուրի:

Նույն այդ օրերուն Կաթողիկ եկեղեցւո մեջ բռնկած ներքին պայքարներու ամենեն հրատապ մեկ պահուն, Պոլսո մեջ, 1438-ին, նոր հայ եպիսկոպոս մը կհայտնվի բնմին վրա՝

⁶¹ Ա. Ալպոյանյան, «Շողակաթ», 1952, էջ 275:

⁶² Զ. Աղեմանդր Պալմյան, հիշված աշխատությունը, էջ 82:

⁶³ Անդ, էջ 84:

⁶⁴ Զ. Գրիգորի Գալիմբյարյան, «Կ. Պոլսո Պեյոզլուի հայոց գերեզմանատունը», «Հանդես ամսօրյա», 1911, էջ 469:

⁶⁵ Բառնարաս վարդապետ Հովսեփյան, «Հաջորդություն պատրիարքացն Երուսաղեմի», Կ. Պոլիս, 1872, էջ 48:

⁶⁶ Աղգապատում, Բ, էջ 2077:

⁶⁷ Ա. Ալպոյանյան, «Շողակաթ», 1952, էջ 275:

⁶⁸ Զ. Գրիգորի Գալիմբյարյան, հիշված աշխատությունը, էջ 456—458:

⁶⁹ «Հանդես ամսօրյա», 1911, էջ 469—470:

⁷⁰ Զ. Աղեմանդր Պալմյան, հիշված աշխատությունը, էջ 88:

⁷¹ Մասն Ա, հիշատ. ՃԳԴ:

⁷² Զ. Աղեմանդր Պալմյան, հիշված աշխատությունը, էջ 92:

Հովակիմը: Անոր անունը կհիշատակվի առաջին անգամ այն երկու նամակներուն մեջ, զորս հայոց Կոստանդին Զ կաթողիկոսը կուղղէ Կաֆայի ջենովացի հյուպատոս Պատրիմակերիսիին և Ս. Անտոն վանքի վանահայր Նարգիս վարդապետի, հաղորդելով անոնց, որ պատվիրակություն մը կազմած է, որպեսզի իր անունով ներկայանա Փլորենտինո մեջ հրավիրված միաբանական ժողովին: Կաթողիկոսի կազմած այս պատվիրակության մեջ էր նաև Հովակիմ եպիսկոպոս:

Սարգիս վարդապետի ուղղած իր նամակին մեջ, որ 1433 հուլիս 23 թվականը կկրէ, կաթողիկոսը կըսէ. «... Ես իմով լի և կատարեալ ճոխութեամբ ետու իշխանութիւն Սարգիս վարդապետի, որ է և եղիցի փոխանակ անձին իմոյ, ընդ նմին և Մարկոսի և Թովմայի վարդապետաց և Յովակիմայ եպիսկոպոսի Բերիայ, զի երթիցեն ի ժողովի և լուսատու եղիցի նոցա Հոգին Սուրբ...»⁷³:

Նման պարբերութիւն մը կա ջենովացի հյուպատոսին ուղղված նամակին մեջ ևս. «... լիով իշխանութեամբ մերով կարգեցաք փոխանակ անձին մերոյ զորդի իմ զՍարգիս վարդապետ, զՄարկոս վարդապետ և զՅովակիմ եպիսկոպոս Բերիայ, զի երթիցեն ի սինհոդոսն յայն օրհնեալ...»⁷⁴:

Փլորենտինո ժողովին հետ կապված անցուցարձեքով զբաղող մեր բոլոր հեղինակները՝ Զամչյան⁷⁵, Պալմայան⁷⁶, Գալմբայարյան⁷⁷, Օրմանյան⁷⁸ և այլն, Հովակիմը կարծած են Բերիո, այսինքն Հալեպի եպիսկոպոս: Հ. Ներսես Ակինյան առաջարկեց սակայն ուղղել Պերայի, հիմնվելով այն փաստին վրա, որ բնագրին մեջ Pera է, այսինքն Բյուզանդիոնի հանդիպակաց ջենովական թաղը⁷⁹: Ակինյանի ուղղումն հետո հայ բանասիրությունը Հովակիմը Բերայի, կամ Պոլսո եպիսկոպոս կնկատեն, հայ գաղութը, այդ շրջանին, իմրված ըլլալով ջենովական թաղին մեջ:

Ակինյանի առաջարկած ուղղումը այլապես ալ տրամաբանական էր, որովհետեւ Կոստանդին կաթողիկոս կարիք չունէր Հալեպի եպիսկոպոսը ընկերացնել Փլորենտինո ժողովին համար իր նշանակած պատվիրակության, որուն մյուս երեք անդամները Կաֆայեն էին և որ Պոլսեն պիտի անցնէր դեպի Իտալիա:

Հովակիմի Պոլսո եպիսկոպոս ըլլալու պարագան ավելի ևս ստուգված նկատվեցաւ մա-

նավանդ հիշատակարանի մը հիման վրա, զոր Բարգեն եպիսկոպոս հայ բանասիրության ծանոթացուցած էր տարիներ առաջ: Կակեսիոնեք այն Զեռնադրութեան Մաշտոցին, որ սեփականութիւնն էր Տրոյ (ԱՄՆ) բնակող հայու մը, մարաշցի Նշան Կ. Կանեմյանի և որուն հիշատակարանը տեսած ու ընդօրինակած էր Բարգեն եպիսկոպոս (հետագային աթոռակից կաթողիկոս Կիրիկիո):

Արդ, այդ հիշատակարանը կըսեն. «Գրեցաւ գիրքս ձեռնադրութեան թվ. 926 (1438) ի վալեւումն արհիպիսկոպոսին Տէր Յովակիմին Կոստանդինուպոլսի: Զոր Տէր Աստուած վալեւելալ տացէ յամերամս ժամանակաց. ամէն: Կատարեցաւ հրամայեալն ի քէն ով տէր պատուական: Զսակա. գծիկս ընկալ յանպիտան Յակոբ արեղէ Տրապիզոնցոյ, իբրև զհերեւէյս այրոյն: Եւ անմեղադիր լեր խոշորութեան և անարհեստութեան և սխալանաց սորա, զի կար մեր աստուգի էր, և մի մոռնար ի մտաց քոց սուրբ ի բարի մասի զանարժանս աղաչեմ»⁸⁰:

Բարգեն եպիսկոպոս այս առթիւ, ցույց տալիս հետո, թէ Պոլսո առումն շատ առաջ մայրաքաղաքին հայերը ունեին եկեղեցական վարչական կազմակերպություն մը, ըսենք առաջնորդություն մը, որուն գլուխը կգտնվէր 1438-ին Տեր Հովակիմ արքեպիսկոպոս, զիտել կուտար. «Ասիկա ցույց կուտար նաև, թէ Կ. Պոլիս հայ բնակչություն մը ունէր արդեն, և այս հայ բնակչությունն ալ ունէր իր կազմակերպչալ առաջնորդությունը, որուն սկիզբը և ծագումը թեև անձանոթ է մեզ, բայց անհավանական չէ դնել իտալիկ կաթողիկոսն (973—992) առաջ, որ կազմակերպեց Արևմտքի հայ գաղութները՝ հատկապես ձեռնադրալ եպիսկոպոսներ զրկելով բյուզանդական կայսերական սահմաններուն մեջ հաստատված հայոց վրա: Թեև, Կ. Պոլիս չի հիշվիր իտալիկ կազմակերպությանց մեջ, և ասիկա թերեւս ա՛յն պատճառով, որ Կ. Պոլիս արդեն ունէր իր կազմակերպչալ առաջնորդությունը, իտալիկ կաթողիկոսի կարգադրութենէն առաջ»⁸¹:

Հովակիմ եպիսկոպոսի պարագան անգամ մը ևս իր լուսաբանությունը գտաւ, երբ Հալեպի նախկին առաջնորդ Արտավազդ արքեպիսկոպոս Հալեպի հայոց պատմության մեջ 1438-ին իտալաւոր անվամբ արքեպիսկոպոս մը կհիշեր իբրև Բերիո (Հալեպի) առաջնորդ⁸²:

⁷³ Անդ, էջ 88:

⁷⁴ Անդ, էջ 89:

⁷⁵ «Պատմութիւն Հայոց», Գ, էջ 473:

⁷⁶ «Պատմություն կաթողիկէ վարդապետության ի Հայոց», էջ 87:

⁷⁷ «Հանդես ամսօրյա», 1911, էջ 463:

⁷⁸ «Աղագրատում», Բ, էջ 2080:

⁷⁹ «Հանդես ամսօրյա», 1935, էջ 38:

⁸⁰ Բարգեն եպիսկոպոս, «Կ. Պոլսո Հայ Պատրիարքութեան ծագումը և առաջին պատրիարք Հովակիմ արքեպիսկոպոս», «Հանդես ամսօրյա», 1924, էջ 432—441:

⁸¹ Անդ:

⁸² Արտավազդ արքեպիսկոպոս Սյուրմեյան, «Պատմություն Հալեպի հայոց», դր. Գ, էջ 11:

Հարցը հայ բանասիրության համար մեծությամբ չի նկատվիր, երբ Հ. Ներսես Աղիյան հրապարակեց հեղինակության հետևողական մեծ մեծ, հայտարարելով, որ Հ. Արեգանցի Պաշտոնական Պատմությունը կաթողիկոսական վարչականության գրքին մեջ Pera-ն շատ ճիշտ թարգմանված է Բերիա, այսինքն Հալեպ, որ, ըստ այնմ պետք է վերստին ուղղել 1935-ին իր ըրած ուղղումը, և որ հետևաբար չեն սխալված Չամչյան, Պաշտոնական և Գալսեմբյան, Հովակիմի նկատելով իբրև «Բերիո առաջնորդ»⁸³, Աղիյան այս առթիվ կամիթ մըն ալ կուտար Սյուրմեյան արքեպիսկոպոսին, ըսելով, որ անոր հաճելի չէր բնականաբար Հալեպի առաջնորդներու շարքին ունեցած ըլլալ եպիսկոպոս մը, որ պիտի մասնակցեր Փյունիտի ժողովին: Աղիյանի կարծիքը ևս այն էր, թե «Հովակիմ ձեռնադրված Հալեպի թեմին վրա կգործեր պաշտոնով Կ. Պոլիս»:

Ալպոյաճյան փութաց մատնանիշ ընել Աղիյանի այս տարօրինակ հետևողական, անհավանական գտնելով միևնույն ատեն Արտավազդ արքեպիսկոպոսի վերադրված դիտումը, և անտեղի՝ Աղիյանի փորձը Հովակիմ եպիսկոպոսի անունը վերստին Հալեպի առաջնորդական Աթոռին կազմելու, առանց նոր հայտնության մը⁸⁴:

Ալպոյաճյան նույն հարցին պիտի անդրադառնար նաև ավելի հետո⁸⁵, հերքելու համար Երազմանուտ և վաստակավոր Միսիթարյան-ին տեսությունները:

Անգամ մը ևս պնդել և փաստել հետո, թե բնագրին Pera անունը պետք է Պերա տառագրված և ոչ թե Բերիա, Ալպոյաճյան սխալ կգտնե Աղիյանի այն տեսությունը, թե Հովակիմ ձեռնադրված Հալեպի թեմին վրա, պաշտոնով կգործեր Կոստանդնուպոլիս, ու կըսե. «1438-ին Բերիո առաջնորդ Հովակիմ եպիսկոպոսը կարելի չէր անմիջապես Կոստանդնուպոլս արքեպիսկոպոսական տիտղոսով պնդել: Հայ Եկեղեցիով օրհնքներուն համաձայն, եպիսկոպոսները ներքին չէ թեմի թեմ փոխադրել: Հալեպի առաջնորդ եպիսկոպոսը, հայոց կաթողիկոսը հավանական չէ որ Կ. Պոլսո եպիսկոպոս նշանակած ըլլա ճիշտ այն պահուն, որ զայն կնշանակեր պատգամավոր և կուտեր զրկել Խալիթա: Հետևաբար Հովակիմ եպիսկոպոս բնավ հավանական չէ, որ Հալեպի առաջնորդությունը վարած ըլլա: Pera-ն Բերա կարգավորված և սխալ թարգմանելով կազմված է այն կարծիքը, թե Հովակիմ Բերիո եպիսկոպոս էր, մինչ աղիկա

հաստատող ոչ մեկ փաստ կա: Հետևաբար Հ. Աղիյանի առաջին կարծիքը ավելի հիմնավոր է քան այս երկրորդ սրբազրյալը»:

Ալպոյաճյան ընդարձակ մեջբերում⁸⁶ մը կընէր այս առթիվ Օրմանյանին, ցույց տալու համար, որ Փյունիտի ժողովին հայոց մասնակցությունը ապահովվելու ցանկությունը առավելապես Դրեմի ջենովացի իշխաններուն խողովակով եկավ Սիս, և կըսեր, թե Օրմանյան շատ ճիշտ դատողությամբ մը կըրցած է տեսնել, թե ջենովացի պաշտոնատարներուն պահանջումով, ջենովական հպատակ հայերու կողմն հայոց կաթողիկոսին եղած խնդրանքին հայոց հայրապետը զոհացում տված է բավականապես իբրև պատվիրակ շուրս անձեր նշանակել Լուսինիս Կաֆայի մեջնեն:

Արդ, անոնցմե երեքը իսկապես Կաֆային էին, իսկ չորրորդը՝ «Հովակիմ», — կըսե Ալպոյաճյան, — իրապես կգտնվեր, իր կարգին, ոչ թե Կաֆա, այլ անոր պես ջենովական տիրապետության տակ գտնվող Բերայի մեջ», մանավանդ որ «խալամական տիրապետության տակ գտնվող Հալեպի եպիսկոպոսը կընանք ըսել, թե անկարելի է որ նշանակվեր հայոց կաթողիկոսին պատվիրակ առանց վտանգելու կաթողիկոսը և իր անձը»:

Հովակիմ եպիսկոպոսի ստեղծած կնճիռը հայ բանասիրության համար միմիայն իր տիտղոսն չի բխիր սակայն:

Ձեռագիրներու հիշատակարանները զանազան թվականներու Հովակիմներ կհիշեն տարբեր վայրերու մեջ, այնպիսի շփոթությանց առջև դնելով հայ բանասիրությունը, որ մինչև այսօր ալ ան անճրկված կմնա ճշտելու ժամանակ, թե այս բոլոր Հովակիմները ի՞նչ կապ ունին այն Հովակիմին հետ, որ 1461-ին Պոլսո հայոց առաջին պատրիարքը պիտի ըլլար Յաթիհի կարգադրությամբ, թե միևնույն եպիսկոպոսն են բոլորն ալ, թե տարբեր անձնավորություններ:

Բացի այն Հովակիմեն, զոր 1438-ին կգտնենք Կոստանդնուպոլիս, Հովակիմներ կհիշվին արգարե նաև 1444-ին՝ Բրուսայի և 1445-ին՝ Կուտինայի մեջ, բացի այն Հովակիմեն, որ 1461-ին Կոստանդնուպոլսո պատրիարք պիտի դառնար և բացի անկե, որ 1469-ին հիշված է իբր եպիսկոպոս Փիլիպի:

Ոմանք կնույնացնեն բոլոր Հովակիմները և կենթադրեն, թե Պոլսո երբեմնի Հովակիմ եպիսկոպոսն է, որ հետո անցած է Փոքր Ասիա՝ թուրք պետության մեջ գտնվող հայերը հովվելու, գտնված է Բրուսա և Կուտինա, ուր շփման մեջ եղած է թուրք իշխանությանց հետ, հետո Պոլիս կանչված է Յաթիհի կողմն, որ զայն բաղմեցուցած է Պատրիարքական

⁸³ «Հանդես ամսօրյա», 1951, էջ 461:

⁸⁴ «Հայաստանի կոչնակ», 1951, էջ 946:

⁸⁵ «Ստամպոլի և շրջականերու հայոց հոգևոր վարչության սկզբնավորությունը», «Շնորհալի», Կ. Պոլիս, 1952, էջ 272—277:

⁸⁶ «Ազգապատմ», Բ, էջ 2079 և հաջորդները:

Աթոռը, և վերջապես գտնված է նաև Փիլիպե, որ մաս կկազմեր արդեն թուրք պետության: Ինչ ալ ըլլա բոլոր այս Հովակիմներուն կապը մեր Հովակիմին հետ, սա միայն ասուլիք է, որ 1438-են հետո ան այլևս Պոլիս չէ, և որ ուրիշ եպիսկոպոսներ կուգան հիշատակելի անոր փոխարեն:

Կոտինայի (Քյոթահիայի) Ս. Աստվածածին եկեղեցւոյ «Քյոթիուկ»-են վահրամ արքեպիսկոպոս Մանկունի ժամանակին ընդօրինակած է հետեւյալ տողերը. «Հաստատեցաւ հիշատակարանս այս թիւին ՊՂԴ (1445) ամին, ի հայրապետութեան Տեառն Կարապետին և յեպիսկոպոսութեան Տեառն Ուլակիմայ և երեսփոխանութեան Յակոբին, ի քահանայութեան և ի սպասաւորութեան սբ. եկեղեցւոյս Կիրակոս երիցու և Գրիգոր երիցու և ի թագաւորութեան տաճկաց Սուլթան Մուրատի»: Այցելու հայ եպիսկոպոսներ ևս հաճախ պետք է անցած ըլլան Վոսփորի ափերէն Պոլսո գրավումէն առաջ: Սակայն քիչերու միայն հիշատակութիւնը ունինք: 1439-ին Պոլսո մեջ կ'ըլլէին, օրինակ, Դիարբեքիւրի առաջնորդ Մկրտիչ Նաղաշ եպիսկոպոսը:

Մկրտիչ Նաղաշ համբավւոր այն տաղասացն ու նկարիչն է, որ Ժն դարու սկիզբները Բաղեշի մօտ Պոռ գլուղը ծնած, կրօնական ասպարեզը ընդգրկած և հետագային եպիսկոպոս ձեռնադրված Կոստանդին Զ Վահկացի կաթողիկոսէն, միջնաշարյան հայ գրականութեան ամենէն կարկառուն դեմքերէն մեկը հանդիսացաւ: Միջագետքի հայոց առաջնորդն էր, բայց սքեմը չարգիլեց զինքը երգել հասարակական մոտիվներ, ինչպէս իրմէն առաջ ըրեր էր Յրիկը և զմայլելի տաղեր նվիրեր մանավանդ հայ դարիներուն:

Նաղաշ նախախնամական դեր կատարած է իրեն հանձնված թեմին մէջ: Ծահած ըլլալով Աքքոյունլուներու բեյին՝ Օսմանի համակրանքը, հաջողած է ամեն տեսակ արտոնութիւններ ապահովել քրիստոնեաներուն, եկեղեցիներու նորոգութեան թուլտուլութիւնն ստանալ, տուրքէ զերծ կացուցանել հոգեւորականները, պաշտամունքի ազատութիւնը ապահովել, գերիներու փրկութիւնը ձեռք ձգել և այլն: «Ներկորդ լուսաւորիչ աւենայն Միջագետաց և պարծունք պարծանաց ամենայն քրիստոնէից» կորակե զայն հիշատակարան մը:

Բայց ինչ որ զինք բացառապէս կկապե Հայ եկեղեցւոյ պատմութեան, այն անհողդող կեցւածքն է, զոր ցույց տվաւ Եւգինիոս պապի միաբանական փորձերուն առթիւ: Պատասխանելով Կոստանդին Զ Վահկացի կաթողիկոսին հարցումին Փլորենտիո ժողովին մասնակցելու համար պապին ստացած հրավերին առթիւ, թելադրած է մերժել որեւէ առաջարկ որ կձգտի Հայ եկեղեցիին պարտա-

դրել Քաղկեդոնը: Պատմական իր գրութիւնը հասած է մեզի «Պատասխանի լատինացոց թղթոյն ի Մկրտիչ նկարագրէ. զոր գրեաց հրամանաւ կաթողիկոսին և մեծ բաբունապետին թումալի»⁸⁷:

Գալով իր Պոլիս այցելութեան, այդ մասին հետեւյալը գրտենք: 1449-ին գրված «Յայնամատրք»-ի մը հիշատակարանը, զոր ձեռագրին հետագա ընդօրինակութիւններուն հիման վրա վերակազմած է Լ. Խաչիկյան և որ կարդումակէ Մկրտիչ Նաղաշի կենսագրութիւնը, կպատմէ, թէ Նաղաշ, որ 1431-ին նստած էր ՎԱթոռ հայրապետական ի լմմիթ շահաստանի», ի ՊԶԼ (1439) թուին սկսանի վերանորոգել զամենագոյլ և զամենահարշն զամենեցուն զարմանալին՝ զհրաշափառ կաթողիկէն, որ լմմիթ շահաստանի, որ յանուն Սրբոյն Թէոդորոսի յինաւորին», «զլուս գրմբէթին բարձր էր քան զմնարայիցն», «զոր տեսնալ քրիստոսատեաց ազգն մահմետականք, և ի խոր խոցեցան, և ձայն ետուն միմեանց որդիքն Հագարայ, և հռչակ հարեալ համբաւեցին և ամբաստան եղին առ սուլթանն Եգիպտոսի, և առ թագաւորն Պարսից, և առ սուլթանն Հոռոմոց տանն, եթէ այսպիսի գեղեցիկ յօրինուածով բարձրացաւ եկեղեցին քրիստոնէից: Զոր լուեալ նոցա վառեցան չար նախանձու և իսկոյն իսկ դեսպան և հրովարտակա առաքեցին առ սուլթան Համզէն՝ քակել զամենագոյլ սուրբ կաթողիկէն: Եւ անտանելի սուգ հասաւ Հայոց ազգին, և ամենեքեան ի խոր խոցեցան, և յամենայն աչաց աղիողորմ արտասուս հեղոյր: Եւ ետուն կաշառս դանձաբազում, և ոչ կարացին ազատել, զի զամենահրաշ և զամենագոյլ հրաշալի գմբէթն քակեցին հաւասար տներացն, և ամենայն քրիստոնեայք ի սուգ մտին... Եւ առաւելապէս արի այցելուն և քաջ հովուապետն Տէր Մկրտիչ՝ շինող սուրբ կաթողիկէին: Եւ ի սաստիկ խոցոյն և ի դառն կսկծանացն տարաշխարհիկ եղև, և գնացեալ էանց ի ծովն Պոնտոսի և Եհան ի Կաֆայ և յՍտամպուլ, և զցայգ և զցերեկ խոցեալ սրտիւ առ Աստուած աղաղակէր՝ այցելու լինել կաթողիկէին յառաջ քան զելանելն ի մարմնոյն, զի մի մտցէ խոցով ի գերեզմանն...»⁸⁸:

* * *

Հասած ենք արդեն Պոլսո գրավման: Փոթորկած է բյուզանդական կայսրութեան հինավուրց մայրաքաղաքը: Թշնամին դուռը կծեծե, մինչ մարդիկ կվիճին ներսը դավանական հարցերու մասին: Ինչ կընեն հայ

⁸⁷ Մեսրոպ Մաշտոցի անվան Երևանի պետական մատենադարան, ձեռագիր թիվ 5657:

⁸⁸ Լ. Ս. Խաչիկյան, «Ժն դարի հայերն ձեռագրերի հիշատակարաններ», Ա, Երևան, 1955, էջ 627-629:

փոքրիկ հոտը ճակատագրական այդ պահուն
և ո՞վ է եպիսկոպոսը, որ դաշն կհռնվի: Հո-
վակիմը վաղուց այտեղ չէ, իսկ Նաղաշը
պահ մը հանդիպած՝ մեկնած է: Ու տասնհինգ
տարին է վեր որևէ եպիսկոպոս չի հիշատակ-
վիր հոն: Փոխարեն՝ բյուզանդական կայսրու-
թյան մահու և կենաց այդ օրերուն Պոլիս
կզտեններ երկու հայ վարդապետներ, որոնք
Պոլսո աղետալի օրերը պիտի նկարագրեն
հետո պատմական զույգ ողբերու մեջ: Այդ
վարդապետներն էին Աբրահամ Անկյուրացի,
հեղինակը Ռիդը ի վերա՝ առման Կոստան-
դինուպոլսոյ՝ հայտնի պատմական ոտանա-
լորին, և Առաքել Բաղիշեցի, որ հորինած է
Ռիդը մայրաքաղաքին Մորմալոյուն, երկու
ոտանավորներն ալ մեզ հասած բազմաթիվ
ընդօրինակություններով և երկուքն ալ տըպ-
ված քանիցս⁸⁹: Ասոնցմէ Աբրահամ Անկյու-
րացին ակնատեսն է դարհուրելի անցքերուն,
որոնք Պոլիսը սպանդի թատր ըրին 1453 մա-
յիսին, իսկ Բաղիշեցին, թեև Պոլիս չէ գտնված
անդտի օրերուն, սակայն ժանոթ է իրեն բյու-
զանդական երբեմնի մայրաքաղաքը:

Թե ի՞նչ կապ ունենին սույն երկու հոգևորա-
կանները Պոլսո հայ թեմին հետ՝ ոչինչ մեզ
հայտնի չէ. բայց անոնց ներկայությունն իսկ
Պոլիս ակններե փաստ է հայ հոգևոր կազմա-
կերպության մը բյուզանդական մայրաքաղա-
քին մեջ:

Յաթիհի մոտքը Պոլիս նոր շրջան մը պի-
տի բանար հայության համար, մանավանդ
երբ 1461-ին Պատրիարքական Աթոռ մը հաս-
տատվեր մայրաքաղաքին մեջ: Բայց մինչև
Աթոռին հաստատումը հայ հոգևորականներ
շարունակած են հովվել իրենց փոքր հոտը
թուրք վարչության տակ:

1459—1461 թվականներուն, ուրեմն ար-
դեն Պոլսո գրավումեն բավական հետո և
պատրիարքության հաստատման նախօրյա-
կին, հիշատակված կզտեննր Մարտիրոս Ե-
պիսկոպոս Կոստանդնուպոլսի վիճակին⁹⁰:

Երևանի Մատենադարանին 1871 թիվ ձե-
ռագիրը, «Ուսումն բժշկութեան Ամիրզովաթի
Ամասիացոյ» հետևյալ հիշատակարանը ու-
նի. «Գրեցաւ թագոորական բժշկարանս ի
թվականիս Հայոց ԶԸ (1459) ամին և ի նո-
յեմբերի ամսուն ի Գ (3), օրն շաբաթ, և ի
քաղաքին Կոստանդինոյ պալտի, և ի յառ ոտն
վանիցն Սուրբ Ստիփանոսու, և ի կաթողիկո-
սութեանն Հայոց Տէր Գրիգորայ, և ի հայրա-
պետութեանն Տէր Մարտիրոսին Կոստանտի-
նոյ պալտու վիճակին, և ի պարոնութեանն
Մուհամատ խանին...»⁹¹:

⁸⁹ Զ. Ա. Անադյան, «Հայկական աղբյուրները Բյու-
զանդիայի անկման մասին», Երևան, 1957:

⁹⁰ Գր. Ապաճյան, «Շողակաթ», Բ տարի, էջ 276:

⁹¹ Լ. Ս. Խաչիկյան, հիշված աշխատությունը, Բ,
էջ 115:

Հրաշյա Աճառյան սույն Մարտիրոսը կուզե
նույնացնել ավելի ուշ հիշված Մարտիրոս Ե-
պիսկոպոս Կաթալեցիի, և Գարամանեն
1479-ին Պոլիս բերված Մարտիրոս վարդա-
պետի հետ⁹², թեև բավարար հիմքեր չկան
նման ենթադրության մը համար:

Այսպիսով ի կարծիքով «Մարտիրոս
1459-ին կվաթեր Պոլսո և Բերայի եպիսկոպո-
սությունը, մինչև որ Հովակիմի պատրիարք
ընտրությանը կընջվեր այդ Աթոռը, կվերնար
երկվությունը և բոլոր օսմանյան երկիրներու
հայերը կմիանային Բալկանյան լեռներեն
մինչև Կեդրոնական Փոքր Ասիան»⁹³:

Բոլոր այս սովալները մեզ կբերեն այն
եղրակացությունը, որ Պոլսո մեջ հայ թեմ եղած
է Յաթիհեն առաջ, և որ հետևաբար Յաթիհեն
չի թվագրվիր հայ եկեղեցական կազմակեր-
պություն մը Վոսփորի փերուն վրա: Ոչ մեկ
տարակույս չկա, որ հայ բջիջ մը արդեն կար
այնտեղ ու հոգևոր կյանք անոր ծոցին մեջ,
երբ դեռ հայերը շփման մեջ մտած չէին թուր-
քին հետ, և երբ Յաթիհ դեռ բեմ մտած չէր:

Մինչև այսօր չուսարանված կշարունակե
մնալ այն հարցը, թե ո՞ր կնստեր հայ ե-
պիսկոպոսը Պոլսո մեջ: Անոր Աթոռը բուն
Բյուզանդիոնի մեջ էր, թե Ղալաթի ջենո-
վական թաղը, ուր հայերը եկեղեցի ալ ունեին
ԺԴ դարեն ի վեր: Այս մասին հայտնված կար-
ծիքները ենթադրութենեն անդին չեն անցնիր,
որովհետև ժամանակակից որևէ աղբյուր օգ-
նություն չի հասնիր մեզի:

Իրենց Պոլիս գտնված միջոցին ո՞ր
կնստեին, օրինակ, Հովհաննես և Նսայի ե-
պիսկոպոսները, որոնք կհիշվին Պոլսո մեջ
ԺԾ դարու երեսնական թվականներուն:

Փաստ առնելով այն պարագան, որ Հով-
հաննես եպիսկոպոս հիշատակված է իբրեկ
Հարգեալ ի կաթողիկոսէ մերմէ Ամենայն
Հայոց ի կողմանս Կոստանդնուպոլսի», իսկ
Նսայի եպիսկոպոս՝ «ի նմին քաղաքի եղեալ
ի հոգաբարձութիւն եկեղեցւոյն հայոց», Ալ-
պոյաճյան կենթադրե, թե «բյուզանդական
կայսրության վերջին օրերուն, երբ Պոլիս եր-
կու իշխանությունց միջև բաժնված էր, Բերա՝
որ ջենովական էր՝ ուներ առանձին առաջնորդ
կամ տեսուչ և Կ. Պոլիս քաղաքը հունական
վարչության տակ ուրիշ հոգևոր պետ մը»⁹⁴:

Ուրիշ կնճիռ մը եկեղեցին է, ուր բնակած
են Պոլիս գտնվող հայ եպիսկոպոսները:
Դժվարությունը ինքնին կվերնա, եթե Ղալա-
թիան սեպենք անոնց կայան. այդ պարա-
գային նախ Ս. Մարգիսը պետք է հյուրընկա-
լած ըլլա զանոնք, և ապա Ս. Լուսավորիչը:

⁹² Զ. Անադյան, «Հայերեն անձնանունների բառա-
րան», Գ, էջ 282 և 284:

⁹³ «Շողակաթ», 1952, էջ 276:

⁹⁴ Անդ, էջ 275:

Իսկ Բյուզանդիոնի՝ մեջ: Ո՞րն էր անոնց օթեանը հոն: Եթե մեզ ալ ներվեր ենթադրությանց հետքերուն վրայեն քայլել, անոնց խուցը պիտի փորձվինք Մամաթիա փնտռել: Եվ ահա թե ինչո՞ւ: Եթե Ֆաթիհ Սուլթանը հայոց առաջին պատրիարքը կղենդեր Սուլու Մանաստրի հունական Ս. Գևորգ եկեղեցին, պետք է հայերը գտնե՞ն ավանդության մը կապված ըլլալին այդ մենաստանին հետ:

Թե երբե՞ն ի վեր Սուլու Մանաստրը կգտնվի հայերուն ձեռքը՝ աղբյուրները շատ ալ համեմատելի չեն: Պահ մը կարծվեցա՞վ նույնիսկ, որ ան հայերուն պատկանած է Պոլսո գրավումէն իսկ առաջ: Այդ կարծիքը հետեւանք էր գերման ծանոթ թրքագետ Ֆրանց Բաբինգերի հայտնաբերած մեկ ֆերմանին: Անով Ֆաթիհ Սուլթան Մեհմեդ 1473 օգոստոս 8-ին կհաստատեր 1458 մարտ 17-ին տված իր մեկ նախկին ֆերմանը, որով ի պատասխան Սուլու Մանաստրի հայոց առաջնորդ (մարհասա) Գրիգորի դիմումին, անգամ մը ևս կարգվեր Աքքերմանեն եկող գաղթականներուն ոտնձգութիւնները Սուլու Մանաստրի վանքին մոտակա խարխուլ տաղավարներուն (օտալար) և հողերուն (երլեր) վրա, որոնք հինն ի վեր (կադիմդեն) պատկանած էին նույն վանքին, եթե սակայն առաջին ֆերմանեն հետո դանոնք վաճառելու որոշում մը տրված չէր ըստ շերիի:

Ստորեւ տանք նախ ֆերմանը, թարգմանելով Բաբինգերի հրատարակած բնագրէն⁹⁵:

«Ամենն արդարադատը մոռտովմաններու դատավորներուն, լավագույնն անոնց, որ կճանչնան հավատքի միութիւնը, առաքինության և ճշմարտության աղբյուր, ժառանգորդ գիտութիւնը մարգարեներու և առաքյալներու, րովանդակ արարչագործութիւնն ստուգութիւնն պապուլց, ամենն նշանավորն անոնց, որոնք թագավորին կօգնեն լիապես, ո՞վ մեր մոլլան, դատավորը պաշտպանչալ քաղաքին Կոստանդնուպոլսո, — հավերժական թող ըլլան իր առաքինութիւնները, — երբ քեզ կժամանե արքայական այս հրովարտակը, հայտնի ըլլա քեզ՝

Գրիգոր, հայոց առաջնորդը (մերխասա), որ Ստամպոլ, Սուլու Մանաստրը կբնակի, ասկե առաջ իմ բարձր ատլանս գալով հայտնե՞ր էր, թե հիշալ վանքին մոտակա խարխուլ սենյակներուն (օդա) և տեղերուն (եր) մեջ, որոնք հինն ի վեր (քադիմդեն) նույն վանքին ենթակա էին և անոր կպատկանէին, հիմա Աքքերմանեն եկող ինչ-ինչ խումբեր

(թալիֆ) ոտք կղենն. [աղոր վրա] 862 տարվ ջեմադուլ էվվել ամսվան մեջ (1458 մարտ) արքայական հրաման մը տրված էր իրեն. [իսկ] հիմա ան կպահանջե, որ արքայական այդ հրամանը նորոգվի:

Արդ, կհրամայեմ, որ արքայական այս հրամանը ստանալուդ, համապատասխան ձեռվ քննես և տեսնես, և եթե աղկե հետո հակառակ իմաստով հրաման մը տրված չէ, արքերմանցի այդ խումբերը ապօրեն կերպով միջամուխ կըլլան հիշալ վանքին մոտ գտնուվող և հիննն ի վեր վանքին ենթակա խարխուլ սենյակներուն և տեղերուն մեջ, մինչ ըստ օրինի անոնց վաճառման անհրաժեշտութիւն չկա, այդ բանն արգիլես և թույլ չտաս ապօրեն կերպով միջամուխ ըլլալ: Գիտցիր ուրեմն ըստ այնմ և հավատք ընծայե նվիրական նշանիս:

Գրվեցաւ 878 տարվո ընթուլ էվվել ամսվան 13-ին (1473 օգոստոս 8), Կոստանդնուպոլիս քաղաքին մեջ⁹⁶:

Երկար շտեկ Բաբինգերի հայտնաբերած ֆերմանին պատճառած անակնկալը հայ բանասիրութիւն: Երևան ելալ շուտով, թե շփոթութիւն մը զոհ գացած էր Բաբինգեր: Սխալ կարդացած էր ֆերմանին թուղրան և թվականը: Թուղրիմացութիւն անդրադարձալ Բաբինգեր ինքն իսկ, որ իր հոգվածին հրատարակութենէն շուրջ երկու տարի ետք, 2 մայիս 1958 թվակիր նամակով մը կհայտնե՞ր, թե ֆերմանին վերեւ գրողմված թուղրան կպատկանէր Սուլթան Սելիմ Բ-ի (1566—1574) և ոչ թե Ֆաթիհ Մեհմեդի (1451—1481): Այս պարագան բացատրելու համար երեք ենթադրութիւն կըներ, որոնցմէ կնախընտրե՞ր այն վարկածը, թե Ֆաթիհ Մեհմեդ Բ-ի կողմն տրված ֆերման մը, հինցած կամ կորսված ըլլալով, անոր վրանորոգումը խնդրված և ստացված էր Սելիմ Բ-ի օրով: Միշտ համոզված ըլլալով. սակայն, թե ֆերմանը տրված է Ֆաթիհի կողմն, կհետեւեն, թե Ստամբուլի մեջ հայերը կրոնական բարձրագույն իշխանութիւն մը ունէին 1461-էն առաջ, թվական, որ ըստ Չամչյանի («Պատմութիւն Հայոց», Գ, էջ 500) հայոց Պատրիարքութեան հիմնադրութեան կհամապատասխանէ: Հետեւաբար, կեղտակացներ Բաբինգեր, Հովակիմ եպիսկոպոսն առաջ, հայերը ունեցած են Գրիգոր անուն եպիսկոպոս մը Կոստանդնուպոլսո Պատրիարքական Աթոռին վրա⁹⁶:

Բաբինգերի վարկածը ընդունելութիւն չգտալ սակայն ի վերջո և դիտել տրվեցա՞վ, թե ֆերմանին ուղադիր ընթերցումը կասկած կհարուցանէր անոր թվականներուն և անոնց

⁹⁵ Franz Babinger, „Ein Besitzstreit um Sull Manastir unter Mehmed II (1473). Beitrag zur Frühgeschichte des Armenischen Patriarcats von Konstantinopel“. „Charisteria Orientalia...“, Praha, 1956, s. 29—37.

⁹⁶ Հայկ Պերպերյան, «Յոմանյան քանի մը վավերագիր Իսթանպուլի հայոց եկեղեցիներէն ոմանց մասին, «Հանդես ամսօրյա», 1961, էջ 724—725:

վրա հիմնված եզրակացություններուն մասին», որովհետև եթե իրապես «1458-ին Սուլու Մանաստերի վանքը հինգն է վեր, այսինքն առնվազն հարյուր տարին ի վեր հայոց սեփականությունն էր, պետք էր ընդունիլ, թե բյուզանդացիները, Պոլսո գրավումն առնվազն հարյուր տարի առաջ, հայոց հանձնած էին իրենց Peribleptas վանքը, որ հետո Սուլու Մանաստեր կոչվացավ», ինչ որ պիտի ըլլար «անհեթեթ ենթադրություն մը», և կամ, «եթե 1458-ին Սուլու Մանաստեր հայոց կապտականքը՝ պետք էր ենթադրել, թէ Ֆաթիհ, Ստամբուլը գրավելին առ առաւելն չորս տարի ետք, հայոց հանձնած էր հունական ալդ վանքը և հոն հայ եպիսկոպոս մը բնակած էր, և, հետևաբար, գրավման հաջորդ չորս տարվան ընթացքին Ստամբուլի մեջ քանի մը հարյուր հայ կղտնվիր», — ենթադրություն, որուն «ի նպաստ ոչ մեկ պատմական աղբյուր և ոչ իսկ ավանդություն գոյություն ունի»⁹⁷:

Մեր բարեկամին առարկության առաջին մասը տեղին էր անշուշտ, եթե նույնիսկ վերապահ ըլլաքք անոր շարունակությունը:

«Անհրաժեշտ էր ուրեմն, — կրսե Պերպերյան, — ստուգել ֆերմանին մեջ գործածված երկու թվականները, այս ստուգումը կատարեցին երկու ձեռնհաս թրքագետներ, մասնագետ թուրքերեն դիվանական գրություն», և անոնց ստուգման արդյունքն այն եղավ, թե «ֆերմանին առաջին թվականն է 932 ջեմադուլ էվվել, որ կախի 1526 փետրվարին, իսկ երկրորդ թվականն է 976 ըրբի ուլ-էվվել 13, որ համապատասխան է 14 օգոստոս 1570-ին»⁹⁸:

Եթե, հակառակ Բարինգերի պնդումին, ընդունելի սեպենք այս ստուգումը, պետք կըլլա եզրակացնել, որ Սուլու Մանաստերի Գրիգոր եպիսկոպոսը 1526-ին Սուլեյման Քանունի սուլթանին (1520—1566) օրով է, որ ստացած է առաջին ֆերմանը, զոր պետք եղած է նորոգել շուրջ 44 տարի հետո, այն է 1570-ին, Սելիմ Բ-ի օրով (1566—1575):

«Եթե» կըսենք, որով ֆերմանը անձը ենթադրել կուտա երկու դիմումներն ալ ընողը: Այն ժամանակ պետք կըլլա նաև ընդունիլ, որ ֆերմանին մեջ հիշատակված Գրիգորը այն Գրիգոր եպիսկոպոսն է⁹⁹, որ 1526-են 1537-ի միջև Պոլսո Պատրիարքական Աթոռին վրա հիշված է և որ եղբորորդին էր Զաքարիա Վաղարշապատցի կաթողիկոսին, և որ, Հովակիմեն, Նիկողոսեն, Կարապետեն և

Մարտիրոսեն հետո, կհանդիսանար հինգերորդ հայ պատրիարքը Պոլսո մեջ, և ուրեմն ան պետք է ըլլա, որ դիմումը րաժ է Սուլեյման Սուլեյմանին՝ աքքերմանցիներու ոտնձգություններն ազատելու համար պատրիարքանիստ եկեղեցւո սեփական տաղավարներն ու հողերը: Այս պարագան է թերևս, որ կարծել տված է Երեմիա Չելեպիի, թե Սուլեյման Սուլեյման հույներեն առնելով հայոց տվավ Սուլու Մանաստերը:

«Սուլու Մանաստեր կոչեալ՝ Սուրբ Գեորգ փառատուրակաւ,
Չոր Յունաց առեալ մեզ տայ՝ հունգարն՝ որ
Լուրբան Սիւլէյման»¹⁰⁰:

Ու դարձյալ պետք կըլլա ընդունիլ, որ Աքքերմանեն եկող հայ գաղթականները իրապես անհանդիստ կրնին Պատրիարքարանը այն օրերուն, փորձելով գալ դատեղվիլ անոր հողերուն վրա, հավանաբար ֆերմանի մը ուժով, զոր 1507-ին ստացեր էին Ֆաթիհի հաջորդ Սուլեյման Բալազիդ Բ-են, աքքերմանցի Պողոս անուն քահանայի մը ջանքերով¹⁰¹:

Թե ի՞նչ պատճառներ դրդեցին, որ 44 տարի հետո հայոց պատրիարքը անգամ մը ևս սուլթանին դիմե իր կալվածներուն պաշտպանությունը խնդրելու համար՝ չենք գիտեր ստուգապես: Այդ միջոցին Պոլսո պատրիարք էր Հակոբ եպիսկոպոս, որ 1563-ին հաջորդեր էր Տիրատուր Սսեցիին և որուն օրով էր, որ հայ տպագրությունը պիտի մտներ Պոլիս: «Ըստ երևույթին սեփականության վեճի մը առթիվ, Սուլեյման Ա-ի ֆերմանին նորոգությունը խնդրված է, և կամ թե 1526-ին տրված ֆերմանը հինգած ըլլալով անոր հարազատ պատճենը հանել տրված է»¹⁰²:

Որքան ալ Ֆաթիհի վերագրված ֆերմանը առարկությանց բախեցավ, այսպես, ստուգել իշարունակ մնալ սակայն բան մը՝ թե հայերը տեղ էին Սուլու Մանաստերին Ֆաթիհի իսկ օրեն: Այդ մասին, ինչպես հիշած ենք իր տեղին, համաձայն են հայ թե օտար աղբյուրները: Անոր հիշատակությունը կընեն, իբրև հայկական սրբավայր, 1493-ին և 1495-ին գրված հայերեն ձեռագիրներու հիշատակարանները, ժամանակակից հույն պատմիչը Սֆրանցես, ինչպես և հետագա ուղեգիրներ և պատմիչներ՝ Գեորգիս, Համմեր, Ժուանեն-Գավեր, Ա. դը Շոնքրիեռ, Յորգա և այլն:

(Շարունակելի)

⁹⁷ Անդ, էջ 725:

⁹⁸ Անդ, էջ 726:

⁹⁹ Զավյան, Գ, էջ 113:—Հրաճախ Ասատուր, «Ընդարձակ օրացույց Ազգային հիվանդանոցի», 1901, էջ 83:—Օրմանյան, «Աղգապատում», Բ, էջ 2225:

¹⁰⁰ Դոկտ. Վ. Հ. Թորգոմյան, «Երեմիա Չելեպիի Ստամբուլի պատմություն», Ա, էջ 7:

¹⁰¹ Գրիգոր Աղանյան, «Շողակաթ», 1953, էջ 253:

¹⁰² Հայկ Պերպերյան, «Հիշված աշխատությունը», էջ 726: